♦ **«Զայն»**
**վերլուծական տեղեկատվական լրատու**
Նպատակ ունի բարձրացնել Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների շուրջ հասարակության իրազեկության աստիճանը,

♦ **լուսաբանել**
իրականացվող հանրային քաղաքականությունները և հիմքեր ստեղծել դրանց հասարակական մոնիտորինգի և մասնակցության համար:

♦ **Զայնը հրատարակվում է «Օքսֆամ»**
բրիտանական կազմակերպության Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բյուջետային վերլուծությունների» ծրագրի շրջանակներում:

♦ **Ծրագիրը իրականացնում է Տնտեսական զարգացման հետազոտությունների կենտրոնը**
ոչ-առևտրային, ոչ-քաղաքական կազմակերպությունը:



# Զայն

♦ ՀԱՄԱՐ 2 ♦ ՄԱՐՏ, 2004
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

## ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Խոսք ՏԶՀ կենտրոնի

«Արտաքին պարտք» երևույթը հասարակության մտահոգության առարկա է: Հայաստանի շարքային քաղաքացին «արտաքին պարտք» տերմինի մեջ տեսնում է ահազնացող վտանգ, և որ ամենակարևորն է, կասկածներ է տածում այդ պարտքերի կուտակման նպատակահարմարության վերաբերյալ: Դա է պատճառը, որ տեսանելի կամ անտեսանելի ապագայում այդ պարտքը հանրային միջոցներից մարելու հանգամանքն անարդարացի է թվում մեր հասարակության լայն շերտերին: Փաստորեն շատերը կարծում են, որ պարտքերն օգտագործվում են ոչ նպատակահարմար, ուղղվում են որոշակի շրջանակների հարստացմանը, իսկ պարտքերի մարման բեռը պետք է ընկնի հասարակ ժողովրդի վրա: Սույն թողարկումը նպատակ ունի հասարակությանը տրամադրել մատչելի տեղեկատվություն արտաքին պարտքի վերաբերյալ:

### Շահութահարկի նվազագույնի սահմանումը

Վերջերս ՀՀ Ազգային Ժողովն ընդունեց ՀՀ կառավարության առաջարկը նվազագույն շահութահարկ մտցնելու վերաբերյալ, ըստ որի, անկախ ձեռնարկության կողմից շահույթ թե վնաս ցույց տալուց, տնտեսավարող սուբյեկտը պետք է վճարի իր շրջանառության 1 տոկոսը կազմող շահութահարկ: Փաստորեն կառավարությունը ենթադրում է, որ այն ձեռնարկությունները, որոնք վնասներ են ցույց տալիս, իրականում շահութաբեր են, պարզապես դրանք կարողանում են տարբեր ճանապարհներով ցույց չտալ այդ շահույթը և խուսափել հարկերից: Բացի դրական կողմերից այս նորամուծությունն ունի նաև մի մեծ թերություն. քանի որ այս նոր հարկը հաշվարկվելու է շրջանառության ծավալից, ապա կարելի է ենթադրել, որ ձեռնարկությունները կսկսեն հնարավորին չափ քիչ շրջանառություն ցույց տալ, որը կարող է նաև վնասել մյուս հարկերին, մասնավորապես «ամենագլխավոր» հարկին՝ ԱԱՀ-ին:

# Արտաքին պետական պարտքը Հայաստանում

### Ինչպե՞ս ենք պարտքեր կուտակել

Ինչպե՞ս սկսվեց Հայաստանի արտաքին պետական պարտքի կուտակման պատմությունը: Պետք է ասենք, որ դեռևս խորհրդային տարիներին մենք ունեինք արտաքին պարտք, որը կիսում էինք խորհրդային ընտանիքում գտնվող այլ պետությունների հետ: Անկախությունը հնարավորություն տվեց ձերբազատվել այդ պարտքից, բայց դրանից հետո սկսվեց մեր սեփական, «անկախ» պետական պարտքի ստեղծման պատմությունը, որի կարևոր դերակատարումը վերապահված էր լինելու արտաքին պարտքին: 2003 թվականի վերջի դրությամբ մենք ունեինք մոտ 1.1 միլիարդ ԱՄՆ դոլար պարտք, որը կազմում է մեր ՀՆԱ-ի մոտ 40 տոկոսը: 2004-2015 թվականներին Հայաստանը տարեկան վճարելու է մոտ 10 մլն. դոլար տոկոսավճարներ, իսկ մինչ այդ եղել են տարիներ, որ որպես տոկոսավճար վճարվել է մինչև 20 մլն. ԱՄՆ դոլար, որը մոտավորապես համեմատելի է ասենք ընտանեկան նպաստների գծով վճարվող գումարների հետ: Ընդհանուր առմամբ Հայաստանի արտաքին պարտքի վիճակը գնահատվում է միջին ծանրության:

### Ի՞նչ նպատակների համար էր Հայաստանին պետք վերցնել պարտքեր

Տնտեսության ազատականացումը սովորաբար հանգեցնում է սոցիալական լարվածության աճի, քանի որ պետությունը դուրս է գալիս տնտեսությունից, իրեն վերապահում է միայն հարկեր հավաքելու ֆունկցիա (որը, ինչպես ցույց տվեց Հայաստանի փորձը, նույնիսկ 10 տարի անց չի կարողանում արդյունավետ և նորմալ իրականացնել): Արդյունքում, պետությունն արդեն չի կարողանում շատ միջոցներ կենտրոնացնել իր ձեռքը և իրականացնել մեծացող սոցիալական ծրագրեր: Չնայած բարեփոխումների սկզբում միշտ էլ ենթադրվում է, որ միջին ժամկետ հատվածում մասնավոր սեկտորի զարգացմանը զուգընթաց, սոցիալական լարվածությունը կվերանա, Հայաստանի դեպքում ամեն ինչ ավելի բարդ ընթացավ: Վերջերս ընդունված աղքատության հաղթահարման ծրագրով նախատեսվում է, որ բարեփոխումները սկսելուց մոտ քառորդ դար հետո միայն, այսինքն 2015 թվականին, հնարավոր կլինի ունենալ խորհրդային շրջանին բնորոշ սոցիալական լարվածության համեմատաբար ցածր մակարդակ մոտ 20 տոկոս աղքատություն: Բացի սոցիալական ծախսերից, պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի մասնավոր ձեռնարկատիրության զարգացման համար, որի համար խիստ անհրաժեշտ է լրացուցիչ ծախսեր անել, և «խելքի» բերել երկրի ճանապարհները, այլ կոմունիկացիաները, ոռոգման ցանցերը և այլն, որոնք միասին կարելի է կոչել տնտեսության ենթակառուցվածքների զարգացում: Դա ևս հնարավոր չէ անել առանց միջոցների կենտրոնացման, Հայաստանի դեպքում՝ առանց վարկային միջոցների:

Նման դեպքերի համար ամենահարմարը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հիմնականում Համաշխարհային բանկի (ՀԲ) և Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) վարկերն են: Այս կազմակերպությունների պատրաստակամության պատճառը այն է, որ իրենք, կամ ավելի շուտ այդ կազմակերպություններում հիմնական դերակատար հանդիսացող երկրները հավատում են, որ միայն այդ բարեփոխումներով է հնարավոր երկարաժամկետ զարգացումն ապահովել: Բացի միջազգային կազմակերպություններից, Հայաստանը պարտք է վերցրել նաև առանձին պետություններից, բայց դա հիմնականում եղել է ոչ թե դրամային տեսքով, այլ ապրանքային: Այսպես, ԱՄՆ-ից վարկ ենք վերցրել հիմնականում ցորենի տեսքով, Թուրքմենիայից՝ գազի տեսքով, իսկ Ռուսաստանից՝ ատոմակայանի վերականգնման աշխատանքների և այլ մատակարարումների տեսքով:




### Վարկերի արտոնյալությունը

Ընդհանրապես, որպեսզի ցույց տանք այս կամ այն վարկի թեթև կամ ծանր լինելը, անհրաժեշտ է հաշվել դրա այսպես կոչված «գրանտ էլեմենտը», այսինքն, ինչքանով է տվյալ վարկը մոտ դրամաշնորհ լինելուն: Դա չափվում է տոկոսներով, և եթե այդ ցուցանիշը զրո է, ապա տվյալ վարկը առևտրային է, այսինքն արտոնյալ չէ: Իսկ եթե այդ ցուցանիշը մոտ է 100 տոկոսին, ապա այդ վարկը այնքան արտոնյալ է, որ կարելի է համարել անվերադարձ տրված դրամաշնորհ: Ամենաարտոնյալ վարկերը համարվում են ՀԲ-ի վարկերը, որոնք ունեն մոտ 70 տոկոս «գրանտ էլեմենտ», որը բավականին թեթև ծանրաբեռնվածություն է ենթադրում: ԱՄՀ-ի վարկերը ևս ունեն մեծ գրանտ էլեմենտ: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD)

*Շար. հաջորդ էջում*

## Նվազագույն աշխատավարձ

2004 թվականի հունվարի 1-ից Հայաստանում նվազագույն աշխատավարձը կազմում է 13 հազար դրամ, նախկին 5 հազար դրամի փոխարեն: Դա նշանակում է, որ ոչ մի գործատու իրավունք չունի վճարել այս գումարից պակաս աշխատավարձ: Այս քայլով կառավարությունը կատարեց իր այն խոստումը, ըստ որի երկրում նվազագույն աշխատավարձը պետք է հասնի աղքատության պաշտոնական գծին: Այստեղ կարող է հարց առաջանալ, թե ինչո՞ւ պետությունն ավելի բարձր չի սահմանում նվազագույն աշխատավարձը: Դրա պատասխանն այն է, որ, նախ, այդ դեպքում կառավարությունն ինքը ստիպված կլինի մեծացնել իր ծախսերը, իսկ մյուս կողմից, գործարար աշխարհի կողմից կան փաստարկներ, ըստ որի ավելի բարձր նվազագույն աշխատավարձի դեպքում իրենք դժվարություն կունենան շարունակել գործունեության այն տեսակները, որոնք կարող են գոյատևել միայն ցածր աշխատավարձերի դեպքում: Բայց իրականում, գործարարների մեծ մասի մտավախությունը կայանում է նրանում, որ բարձր նվազագույն աշխատավարձի դեպքում նրանք չեն կարողանա առաջվա պես խուսափել հարկերից, քանի որ ներկայումս հարկերից խուսափելու համար նրանք հարկային մարմիններին ցույց են տալիս իրականում վճարված աշխատավարձի միայն մի մասը, ցույց չտված մասով խուսափելով եկամտահարկից և սոցիալական վճարներից:



ՁԱՅՆ

**Հիմնադիր և հրատարակիչ**
«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ

**Խմբագիր**
Աղասի Մկրտչյան

**Փորձագետ**
Նելլի Համազարյան

**Թողարկման ղեկավար**
Մուշեղ Թումասյան

**Գեղարվեստական խմբագիր**
Քրիստափոր Փախանեան

**Լուսանկարները**
Ֆոտոլուր

**Տպաքանակը**
1800 օրինակ:
Տարածվում է անվճար:

**Հասցե**
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 48
Հեռ./ֆաքս: (374 1) 234 420,
**www.edrc.am**
**dzayn@edrc.am**

**Ձայնը** հրատարակվում է **«Օքսֆամ»** ՄԲ աջակցությամբ:
Oxfam

*Սկիզբը՝ նախորդ էջում*

վարկերը ևս արտոնյալ են համարվում, բայց դրանք իրենց արտոնյալության մակարդակով անհամեմատ զիջում են ՀԲ-ի և ԱՄՀ-ի վարկերին: Առավել քիչ գրանտ էլեմենտով վարկեր են եղել ռուսական վարկերը, որոնք ներկայումս արդեն մարվել են:

## Ի՞նչ տարբերություններ կան ԱՄՀ-ի և ՀԲ-ի միջև

Այս երկու գերհզոր միջազգային կազմակերպությունները աշխատում են իրար հետ սերտ համագործակցելով և ավելի շուտ կարելի է խոսել ոչ թե դրանց միջև առկա տարբերությունների այլ պարզապես դերերի բաշխման մասին: Համաշխարհային բանկը վարկեր է տալիս կառավարություններին իրենց առօրյա ծախսերը հոգալու ինչպես նաև ներդրումային ծրագրեր իրականացնելու համար, իսկ Արժույթի միջազգային հիմնադրամը վարկեր է տալիս ոչ թե ծախսելու, այլ ընդհակառակը, պահուստավորելու և կյանքի տարբեր անակնկալներին պատրաստ լինելու համար: Եթե պետությունը նույնացնենք մարդու հետ, ապա կարելի է ասել, որ մարդուն բացի առօրյա ծախսերի և երկարաժամկետ ներդրումներից անհրաժեշտ է նաև որոշակի իրացվելիություն, կամ ավելի պարզ՝ որոշակի պահուստավորված գումար: Դրանցից առաջինի պակասը Հայաստանի համար հոգում է ՀԲ-ը, իսկ երկրորդինը ԱՄՀ-ը:

## Պարտքը առանց ԱՄՀ-ի

Արժույթի միջազգային հիմնադրամից պարտք է վերցվել մոտ 200 մլն. դոլար, որը նշանակում է, որ այդ փողերը չեն ծախսվել և տնօրինվում են Հայաստան պետության պետական դրամատան ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Այդ փողերը այլ հավասար պայմաններում ենթակա չեն ծախսման և կարող են օգտագործվել միայն այն դեպքում, եթե Հայաստանի մակրոտնտեսական կայունությանը վտանգվի: Քանի որ այդ փողերը առ այժմ չեն ծախսվել, ապա տրամադրությունը բարձրացնելու համար կարելի է ասել, որ մեր իրական արտաքին պարտքը կազմում է ոչ թե 1.1 միլիարդ ԱՄՆ դոլար, այլ ընդամենը 0.9 միլիարդ ԱՄՆ դոլար: Ինչ վերաբերում է այդ պահված փողերին, ապա կենտրոնական բանկը դրանք միջազգային պահուստների տեսքով պահում է այլ երկրների առաջատար ֆինանսական հաստատություններում՝ դրա դիմաց ստանալով տոկոսներ: Այս պատմության լավ կողմն այն է, որ մեր ստացած տոկոսները սովորաբար ավել են քան այդ նույն վարկերի դիմաց ԱՄՀ-ին վճարվող տոկոսները, և այդ տարբերությունը, կախված համաշխարհային տոկոսադրույքներից, կարող է կազմել մի քանի միլիոն դոլար և ենթակա է փոխանցման պետական բյուջե՝ որպես ՀՀ կենտրոնական բանկի շահույթ:

## Համաշխարհային բանկի ծրագրերը

Հայաստանի ներկայիս շուրջ 1.1 միլիարդ ԱՄՆ դոլար պարտքից մոտ 0.6 միլիարդը վերցրել է Համաշխարհային բանկից: Այս վարկերը սովորաբար տրվում են 35-40 տարի ժամկետով, տոկոսադրույքը կազմում է տարեկան ընդամենը 0.75 տոկոս, և վարկի վերադարձը սկսվում է 10 տարուց հետո և այդ 10 տարիների համար տոկոսավճար չի գանձվում: Սրանք համարվում են ամենալավ պայմաններով վարկերը: Այդ գումարից 0.2 մլրդ ԱՄՆ դոլար տրվել է պետական բյուջեի ընթացիկ ծախսերի կատարման համար, իսկ 0.4 մլրդ ԱՄՆ դոլարը օգտագործվել է պետական ներդրումային ծրագրերում: Ի տարբերություն ընթացիկ ծախսերի համար տրվող վարկերի, այս ներդրումային ծրագրերի գումարները չեն կարող օգտագործվել բյուջեի սովորական ծախսերի համար, իսկ ֆինանսների նախարարությունը անմիջականորեն չի մասնակցում այս ներդրումային գումարների ծախսելուն և դրանք ծախսվում են այսպես կոչված ծրագրերի իրականացման գրասենյակների (ԾԻԳ) կողմից, որոնք Հայաստանում մեկ տասնյակից ավել են: Ներդրումային ծրագրերը ուղղված են այնպիսի ոլորտների, ինչպիսիք են վառելիքաէներգետիկ, տրանսպորտային, գյուղատնտեսության ենթակառուցվածքներ, սոցիալական ենթակառուցվածքները և այլն:

## Տխուր փորձը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ

Բացի նշված կազմակերպություններից Հայաստանը պարտք է վերցրել նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից (EBRD), ընդհանուր առմամբ մոտ 60 մլն ԱՄՆ դոլար, շուկայական տոկոսադրույքով: Այդ վարկերը ևս կոնկրետ ծրագրերի համար են նախատեսված եղել, որոնք էին Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ բլոկի, «Զվարթնոց» օդանավակայանի բեռնատար համալիրի և գյուղատնտեսական մեծածախ շուկայի կառուցումը: Տարօրինակ զուգադիպությամբ բոլոր այս 3 ծրագրերը վերջնական հաշվով անարդյունավետ են եղել, և իրենց նպատակներին ընդհանուր առմամբ չեն ծառայել: Ամենախոշոր ծրագիրը Հրազդանի ՋԷԿ-ի 5-դ բլոկը, ընդհանրապես անավարտ է մնացել, դառնալով անտեղի վարկ վերցնելու և սերունդների վրա իզուր բեռ փոխանցելու լավագույն «հուշարձան»: Այնուամենայնիվ մենք շարունակում ենք մարել այդ պարտքերը և վճարել տոկոսներ: Սակայն ճշմարտության դեմ չմեղանչելու համար նշենք, որ Եվրամիությունը Հայաստանին պարբերաբար դրամաշնորհներ է տալիս, և դա զգալիորեն թեթևացնում է այդ վարկերի վերադարձի բեռը:



## «Գույք պարտքի դիմաց» գործարքը

Հայաստանը որոշեց ժամկետից շուտ մարել ռուսական վարկերը, որովհետև վճարվող տոկոսավճարների գումարը բավականին մեծ էր: Կառավարությունը դա որոշեց անել դեռևս պետական սեփականություն հանդիսացող գույքով, և այդ գործարքը պատմության մեջ մտավ «գույք պարտքի դիմաց» անվանումով: Մի քանի ձեռնարկություններ, որոնց թվում Հրազդանի ՋԷԿ-ը, «Մարս» գործարանը և «Մերգելյան» ինստիտուտը հանձնվեցին Ռուսաստանին, որի դիմաց չեղյալ հայտարարվեց Ռուսաստանի նկատմամբ մեր ունեցած մոտ 100 միլիոն ԱՄՆ դոլար գումարի պարտքը: Այնքան էլ հեշտ չէ դրան միանշանակ վատ կամ լավ գործարք որակել: Լավ կողմն այն է, որ Հայաստանը ստիպված չեղավ դեռևս մի քանի տարի վճարել բարձր տոկոսավճարներ այդ պարտքի դիմաց, և բացի այդ, եթե այդ ձեռնարկությունները սեփականաշնորհվեին սովորական ճանապարհով, ապա այդ գումարների օգտագործման լավագույն ուղղություններից մեկը կարող էր լինել հենց այդ ռուսական վարկերի վաղաժամկետ մարումը, քանի որ դրանք ծանր վարկեր էին: Իսկ վատ կողմն այն է, որ Հրազդանի ՋԷԿ-ը ակնհայտորեն չէր գտնվում սեփականաշնորհման ենթակա ձեռնարկությունների ցանկում և դրա ապագայի խնդիրը պետք է լուծվեր ոչ թե ռուսական պարտքի բեռի թեթևացման խնդրի ներքո, այլ երկրի ամբողջ էներգետիկ քաղաքականության գերակայությունների հարթության վրա: Ավելին, այս գործարքով Հայաստանը սահմանափակել է Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ բլոկի (որը Ռուսաստանին չի հանձնվել) գործարկման հնարավորությունները, որը կարծես թե վերջնականապես փոշիացնում է այդ նպատակներով 1996-98 թվականներին ծախսված ավելի քան 50 մլն. դոլարը:

Այնպես, որ ռուսական պարտքի հարցը լուծելու համար վերջնականապես «թաղվեց» Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ բլոկի երբևէ գործարկման հնարավորությունը: Ուրիշ բան, եթե ատոմակայանի առկայության և էլեկտրաէներգիայի սպառման ներկայիս ցածր մակարդակի պայմաններում, ինչպես նաև տեխնոլոգիական խնդիրներից ելնելով այդ 5-րդ բլոկը երբևէ չէր էլ գործարկվելու: Բայց դրա մասին երբեք չի հայտարարվել, որի պատճառը, հնարավոր է, ժամանակին միջոցների փոշիացման փաստն ընդունելուց խուսափումն է: Այժմ, երբ այս պատմությունը շատ է խճճվել, հասարակությունը պետք է հստակ տեղեկացվի ինչպես էներգետիկ հզորությունների ապագայի վերաբերյալ, այնպես էլ իմանա կառավարության դիրքորոշումը այն հարցում, թե որտեղ են սկսվել սխալները և արդյոք դրանք հիմա չեն շարունակվում:

## Պարտքի մարման այլ հնարամիտ տարբերակներ

Հայաստանը Թուրքմենստանին համոզեց պարտքերը մարել ապրանքներով և դա զգալիորեն հեշտացրեց պարտքի մարման գործը: Իհարկե, այս դեպքում պրոբլեմներ առաջացան Հայաստանի կառավարության և այն հայկական ձեռնարկությունների միջև, որոնց արտադրանքով մարվել էին այդ վարկերը: Սակայն, ընդհանուր առմամբ, պետության ֆինանսական դիրքը դրանով բարելավվեց, ավելի շուտ, փրկվեց հետագա վատանալուց: Կա նաև մի դեպք, երբ Հայաստանի կառավարությունը պարտքի մարման բեռը «փոխանցել» է մասնավոր կազմակերպության: Դա «Զվարթնոց» օդանավակայանի դեպքն է, որի մասնավոր կառավարիչը բացի ներդրումներ անելուց, պարտավորվել է վերսկսել մարել օդանավակայանի բեռնային նոր համալիրի կառուցման համար EBRD-ից վերցված վարկը: Նշենք, որ մեր արտաքին պարտքի հիմնական մասը կազմող ՀԲի վարկերը երբևէ չեն կարող մարվել ոչ փողային տարբերակով: Դրանք Հայաստանը պետք է վերադարձնի առաջիկա 40 տարիների ընթացքում այն տեսքով, որով որ ստացել է:

## Ի՞նչ է պետք անել վստահություն ստեղծելու համար

Նպատակային ծրագրերը կազմում են արտաքին պարտքի ամենամեծ բաժինը: Այս ոլորտի հետ են կապված նաև միջոցների անարդյունավետ օգտագործման վերաբերյալ հասարակության տարբեր խավերում առկա կասկածները: Եթե կառավարությունը շահագրգռված է իր նկատմամբ հասարակության վստահության բարձրացման գործում, պետք է կազմի նպատակային վարկային ծրագրերով իրականացված աշխատանքների գույքագրում և դրա հրապարակում, որտեղ կնշվեն յուրաքանչյուր ծրագրով իրականացված աշխատանքների, լինի դա շինարարություն թե ապրանքների ձեռք բերում, գտնվելու տեղը, ներկայիս կարգավիճակը: Դա հնարավորություն կտա հասարակության լայն խավերին սեփական աչքերով տեսնելու, ստուգելու և օբյեկտիվորեն գնահատելու այդ ծրագրերը: